


Bazar Mourour, CAIRE Egypte



LEQHP

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿՐ. ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԶՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ ՕՐԵՐՐ.

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

թիւսն փրայ է :

Խմբագրութեանն ուղղուած նա-
մակ կամ այլ գրութիւն եւ չի տրուիր:

Եթէ ֆրանսական մտածուչը իր ճիշտ բրանիկնէ-
րով կը փայլի գոյրս կը գրեն ժիւր, Որէյիէն Շօյ, Ռաու-

թիւներ, Սարգէս, Քլարեթի, Ժիւլ Լըմէթը, Գաթիւլ Մէնտէս, Ժիւլիէթ Ատան և քանի մը հաստ ուրիշներ — լուսաւորչները առնելու համար — պատճառը այն է որ Բարիգի կեանքը ամեն վայրկեան նիւթ կը հայթայթէ իրենց։

Բայց հայ բրոնիկալիքի մը ի՞նչ կուզէ որ գրէ երբ ոչխարահիկ ըստած կեանքը գոյութիւն չունի մեր մէջ։

Հայերու ամենէն բազմամարդ և ամենէն ըստաւորեալ կեդրոնին մէջ, նոյն իսկ ի Պոլիս, նիւթը միշտ պակասած է գրողին համար և բրոնիկը քմա՝ ծիւղ լան մը չէ, ընդհակառակը, իրականութիւն մը պէտք է իրեն՝ իր ճաշակին համեմատ դարձարեւելու և փայլեցնելու համար։

Ոչ թատրոն ունիք և ոչ դատարան . կիսաշխարհային կենցաղի վրայ գաղափար չունինք, cabinet particulier մուտ չեն գտած մեր բարքերուն մէջ, ամուսնական գայթակղութիւնները չորս պատի մէջ կը ծնին՝ Գատառտանական խորհուրդին առջեւ մեռնելու համար, թաղականները քիչօրէն չեն գոչնար, տունը մնացած աղջիկները չեն բողոքեր, երիտասարդները չեն ամուսնանար, քահանաները առեւանգուածներ չեն ընէր, ծերերը չեն ջնար, սիրոյ համար չեն մեռնիր, անօթութենէ և կամ յուսահատութենէ անձնասպան չեն ըլլար, խաղի մէջ քանի մը հազար տակ չեն կորսնցներ, սեղանաւորները իրենց քով պահեստի գրուած գրամներով չեն անհետանար, մեր կիները պիտիբլթ չեն նստիր, աղջիկները փառատարան չեն ըլլար, չենք մենամարտիր, տարին հազիւ հարիւր չիշ շաւրանեալ կապուներ, ոչ մարդու պէս կերգենք ոչ ալ պարահանդէսներ կուտանք, արդուարդի արհեստին մէջ հետեւողներ եղած ենք և ոչ երբեք հնարողներ. և ի՞նչպէս կուզէք որ բրոնիկներ գրուին Ալիշանի լեզուով։

* * *

Մանաւանդ Գահիրէի մէջ՝ ուր ընտանեկան և աշխարհիկ հայ կեանքը գոյութիւն իսկ չունի, պարգապէս tour de force մըն է մեր կողմէ երբ մերթ ընդ մերթ «Գրօնիկ», վերնագրին տակ քանի մը քոզ բան գրել կը փորձենք։

Աւասիկ ինչո՞ւ չգոյէ աշխարհայինի՝ երկնային նիւթի մը վրայ ձեզի պիտի խօսէի այսօր թիւ . . . կուզէք որ շիտակ ըսեմ, եթէ զուրէն գրաշարս պետք չի պուար թէ յօդուածս վերջացնելու էի ու ըովհետեւ 10 բուքթ գրերէն անքան սպառած էին։

Հոգ չէ թէ թատրոն՝ չունինք, շաւրանեալ չենք խմեր, հորիզոնական էակներ չեն պտըտիլք մեր շուրջը, պիտիբլթ չենք նստիր և կամ չենք մենամարտիր, նորէն գրչի տակ դնելիք բան մը կրնայինք գտնել, բայց եկու տես որ ատոնցմէ աւելի կարեւոր բան մը կայ որ կը պակսի մեզի Գրօնիկ մը գրելու համար . . . այն ալ այլ գիրն է։

Յ. Ա.

ԹՈՒՐԿԻՈՅ ԵՒ ՊՈՒԼԿԱՐԻՈՅ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Եւրոպական թերթ մը ստալէս կամփոփէ Թուրքիոյ և Պուլկարիոյ միջեւ վէճի տաւարկայ եղած խնդիրներուն արդի վիճակը։

Թուրքիոյ հետ Պուլկարիոյ յարաբերութիւնները քիչ մը ձգտուած են այս պահուստ Պատճառն այն յամառութիւնն է որով Սուլթանը կը մերժէ տալ պուլկար առաջնորդներուն հռչակաւոր Պէրաթները զորս Սօփիայի կառավարութիւնը կը պահանջէ։

Այս խնդիրնոր չէ։ Գրանի մը ամիս առաջ երբ Պուլկարիոյ մէջ հանրային կարծիքն սկըսաւ գրգռուիլ՝ Պէրաթներու մասին գոհացում չի գտնելուն համար, Ֆէրիքիանտ իշխանը յանկարծ ազդու և ճարտար որոշում մը տըլաւ։ Ելաւ Պոլիս գնաց, Սուլթանին ներկայացաւ և պարզեց այն գծուարին կացութիւնը որուն մատնուած էր ինք՝ Մակեդոնիոյ պուլկար եպիսկոպոսներուն Պէրաթներու տրուելու մասին Իրան ցոյց տուած դանդաղութեան երեսէն։

Սուլթանը չափ լաւ ընդունելութիւն ըրաւ իր հարկատուին, և գլխաւորով այն պերճախօսութենէն որով Ֆէրիքիանտ իշխան կը պաշտպանէր իր դատ, բացորոշապէս խոստացաւ անոր՝ խնդրուած հինգ Պէրաթները։ Իշխանը մեկնեցաւ Պոլսէն՝ պանչացած և պաշտօնապէս հրատարակեց իր ձեռնարկին յաջողութիւնը։ Պէրաթներուն վերաբերեալ իրատէն, կրտէին կառավարական ծանուցագիրները, պիտի ելլէ ի մօտոյ։

Պուլկարները հաշուի առած չէին Թուրքիոյ աւանդական խոստմնապանցութիւնը։ Երկուքի մէջ է մանաւանդ որ խոստանալ և կատարելը տարբեր բաներ են։ Մեծ Տէրութեանց դեսպաններն յաճախ առիթ ունեցած են ասոր փորձը տեսնելու, ի վնաս իրենց, հայկական բարենորոգմանց և կրթչի դործերուն մասին կատարուած բանակցութիւններուն առթիւ։

Կ. Պոլսէն ի գուր որ և է բացատրութիւն սպասելէ ետք, Սոփիայի մէջ որոշեցին ծայրայեղ միջոցներու դիմել։ Վերջին օրերս պուլկարական գործակատար Պ. Մարքոֆ հրաման ստացաւ պահանջել Դուռնէն որ Սուլթանին կողմէ Ֆէրիքիանտ իշխանին եղած խոստումը գործադրուի, աւելցունելով որ եթէ պուլկար իշխանապետութիւնը գոհացում չի ստանայ, որոշած է ամեն յարաբերութիւն խզել Թուրքիոյ հետ։ Այս սպառնալիք մինչեւ մէկ աստիճան յուզում առաջ բերաւ ի Կ. Պոլիս։ Սուլթանը պայմանաժամ խնդրեց։ Խնդիրը այս վիճակին մէջ է այժմ։

Հակառակ այս տեղեկութիւններուն, չենք կարծեր սալայն որ Պուլկարիա Թուրքիոյ հետ իր յարաբերութիւնները խզելու, ծայրայեղութեան դիմէ։ Դուռնէն չափ վարպետ է այս տեսակ պոտաշականութեանց առաջին տեսելու համար, և Աւստրիոյ օրինակը դեռ չափ թարմ է մտքերու մէջ։

ԱՅԺՄԷՈՒԹԻՒՆ

Պոլսական մամուլին հրատարակութիւններն ի մասին հայկական գործերու, — մանաւանդ թուրք քերթերէն քաղաքականութեան, — շատ անգամ հանելուկի պէս թանկեղ են որոնց յոժուած գտնելու համար պէտք է կա՛մ գիտակցութիւն ունենալ ինքրին վրայ եւ կա՛մ սպասել եւրոպական Մուրհանդակի յուրերուն։ Այսպէս, նախորդ շաբթուն Պոլսոյ յազիրներուն շրջանն քրին Մալիւմաթէն քաղաքականութեան հետեւեալ միտքիական տողերը։

Կովկասեան և ռուս լրագիրք կը ծանուցանեն թէ Վանայ պարսկական հիւպատոս Միրզա Հիւսէյն Գուլի խան թէհրան վերադառնալու տունն Մեակ լրագրոյ խմբագրաց հետ յարաբերութիւն հաստատելով, թէհրան վերադառնալուն մէկ կողմը պարսկերէն ու միւս կողմն հայերէն լեզուով նոր լրագիր մը պիտի հրատարակէ։ Միրզա Գուլի խան բողոքովին հայանալով՝ զուտ հայերէն լրագիր հրատարակելու ջափ սորված է հոյ լեզուն։ Թէհրանի բոլոր լրագիրք վիճախայ են (°) և հոն հայ գրեր չի գրուելու, թերեւ Մեակ իր գրերն հոն փոխադրէ։

Միւսնոյն քոչարքերով ստացանք Վանայի Իրաւունքը որուն մէջ Միրզա Հիւսէյն Դուլի խանին նուիրուած համակրական յորդած մը անուղղակի կերպով կը յուսաբանէ իրողութիւնը։ Այդ անձ ոչ թէ «քոչորովիկ հայացած է», ալ պարսիկ մնալով հանդերձ շատ հայասէր զգացումներ կը տածէ։ 1896

յունիսի Վանայ կոտորածին ասեմ, ինքը՝ իրեւ պարսկական հիւպատոս՝ իր եւ իր կառավարութեան որոշակի կաշապակութեան տակ սուր է հայերը, 2000 հոգիի կեանք փրկելով։ Վանայի անցնելէն ետքն ալ, պահեր է որք մնացողներէն ու այրած տուներու տերերէն շատեր, միւսն է իր մեկնումը Վանէ։

Այս անգամ, Միրզա Հիւսէյն խան Թիւրքիոյ անցնելուն, ուրկից Թեհրան կողմերէ, Կովկասեան հայ մամուլի ներկայացուցիչները, գրագէտներ, փաստաբաններ, վաճառականներ հացկերոյք մը տներ են ի պահսի ակնոր ու արագին քանակաւորութիւններով շնորհակալութիւն յայտնել են հայասէր հիւպատոսին մարդասիրական զգացումներուն համար։

Միրզա Հիւսէյն խան հոկտեմբերի վերջին շաբթուն մեկնել է դէպ ի Թեհրան ուր մնալիք է քերթ մը հիմնել կեսը պարսկերէն ու կեսը հայերէն։

Ռուսահայ քերթերը անշուշտ պիտի քերտեն մեզ նորագոյն մանրամասնութիւններ այս մասին։

ՕՐՈՒԱՆ ԼՈՒՐԵՐ

Նիւ Եօրթ Հէրոլդս լրագիրն, որ ծանօթ է իր թրքաւէր հրատարակութիւններով, Հիւսէյնի անուն երէց մը և ուրիշ թղթակից մը ճամբայ հանած է որոնք Փոքր-Ասիոյ հայաբնակ գաւառները շրջելով տեղեկութիւններ պիտի քաղեն Ժողովուրդի վիճակին վրայ։ Ռուսահայի հրեայ մը, Հէրման Շէրի, կրնուի կերանայ ասոնց իրեւ թարգման։ Թուրք կառավարութիւնն ալ իր կողմէ քանի մը պաշտօնեայ և մաս մը հեծեալագործ կրնուի քաջանէ այդ շրջուն թղթակիցներուն։ Ալ կրնաք երեւակայել թէ ի՞նչ տեսակ բաներ պիտի գրեն այս վարձկան մարդիկներ։

— Նախորդ թիւով ծանուցինք թէ Թուրքիոյ պահապան զօրաց թիւը պիտի աւելնայ։ Որոշուած է եղեր զօրանոց մը կառուցանել 400 հոգինոց վաշտի մը համար որ մնայուն կերպով հոն պիտի բնակի։

— Պ. Վլադիմիր Եօրթիւի, Կ. Պոլսոյ սերպիական նախորդ գետնանը որ նախարարապետ անուանուեցաւ, անցեալ շաբթու Կ. Պոլիս գացել է՝ իր հրաժեշտի գրերը յանձնելու և անձնական գործերը կարգադրելու համար։ Սերպիոյ նախարարապետին կրնուի քանայ նաեւ Պ. Թէրլան, գետնանտան նախկին խորհրդականը որ Պէրլանտ կը գտնուէր բաւական ժամանակէ ի վեր։

— Թուրքիոյ երկրակալ նախարարութեան խորհրդական անուանուել է Գերմանիոյ ելմտական և առեւտրական խորհրդական Պ. Բարօլօֆ։

— Գերմանական նոր գետնան Պ. Ֆօն Մարշալ Կ. Պոլիս հասնելով իր պաշտօնի գլուխն անցեր է։

— Թան լրագիրը, որ անցեալ տարի բաւելամ էր Թուրքիոյ և այնքան նպաստաւոր յօդուածներ կը հրատարակէր, լեզուն փոխել է այս միջոցիս։ Առաջին անգամը չէ որ բարեգեան մեծ թերթը գաղափարի և ուղղութեան անակնկալ յեղաշրջումներ կունենայ,

ԱԶԴ

Մեր վեցամսեայ շրջանը լրանալուն առթիւ կաղաքարարութիւնը Աղեքսանդրիոյ մեր ընթերցողներուն թէ նոր բաժանորդագրութեան, ծանուցումներու և կամ հին հաշիւներն կարգադրելու համար պէտք է դիմեն առ Տիրար Միհրան Թէլեան, մեր ներկայացուցիչը :

ՏԵՂԱԿԱՆ

Բարձր. Խտիվը կիրակի իրիկուն Մուն-թաղահ ուղեւորեցաւ և այս իրիկուն Գահիրէ կը վերադառնայ :

—Նախարարաց խորհուրդը վաղը կը դու-մարուի 1898 տարուոյ ելմտացոյցին քննութեան ու վաւերացման համար :

—Կը հաստատուի այն լուր թէ եգիպ-տական երկաթուղիներու վարչութիւնը պիտի ջնջէ երկեւեկի տուններու գրութիւնը, և փո-խադարձաբար մեծապէս պիտի վեղչէ պարզ տուններու գինը :

—Բարձր. Խտիվին նկատմամբ հրատա-րակուած արարքերէն քերթուածի մը հեղինակ-ներուն ու տպագրիչին մասին բացուած քննութեան ելքը ծանուցած էինք: Արդ, կե-րեւայ թէ այդ գործին մէջ վերաքննիչ ատե-նի ընդհ. դատախազ Համուլլահ պէյի ըն-թացքը անաչառ չէ երեւցեր դատական նա-խարարութեան խորհրդական Սըր Ճոն Աթօթի, վասնզի այս վերջնոյն պահանջմամբ՝ Համուլ-լահ պէյ պաշտօնանկ եղաւ նախարարական ու-րոշմամբ և իրեն յաջորդեց անգլիացի Բօր-պէթ պէյ, որ վերստին պիտի քննէ վերոյիշ-եալ հրատարակութեան գործը :

—Սպարապետ Բիշնէր փաշա կիրակի օ-րը Գուպպէի պալատը երթալով, տեսակցու-թիւն մը ունեցաւ Բարձր. Խտիվին հետ, և երէկ Սիւէզի ճամբով Սուաքին ուղեւորեցաւ: Բիրսնա փաշայի հետ, հարկ եղած նախա-պատրաստութիւնները տեսնելու Քասալայի գրաւման համար որ խտալացիներուն կողմէ եգիպտական կառավարութեան կը թողուի: Խտիվական կառավարութիւնը 25,700 ոսկոյ վարկ մը բացած է Բիշնէր փաշային՝ Քասալայի գրաւման ծախքերուն համար:

Նոյնպէս տրուած է՝ Սուտանի արշաւան-քին համար պատերազմական նախարարու-թեան կողմէ խնդրուած 40,000 ոսկիի վարկը:

ՕԲԵՐԱՅԻՆ ՇՈՒՐՁԸ

Խտալացիները Հապէշխտանի մէջ յաղթուած ըլլալուն վրէժը շարաթ գիշեր Օրէրայի թատրոնին մէջ առին:

Քաղաքահանութիւնը դահլիճներու գործը չէ այլ ևս, այլ թատրոնին: Խորհրդարաններու գմբէթին տակ վերջի տարիներս ճտերը յաջորդեցին հակա-ճառութիւններու առանց մղուել տալու գործերուն: Թատրական բեմերը աւելի գործունէութիւն կը ցուցունեն այս պահուս:

Խտիվական Օրէրային մէջ Խտալի փաշայի օրե-րէն ի վեր Քրանսական խտարներն էին որ կը տիրա-պետէին միշտ: Անգլիացիները և մանաւանդ իտա-լացիները հաշտ աչքով չէին նայեր այս առանդական մենաշնորհին և իրաւունք ունէին, որովհետեւ այս վերջի երկու տարիքը աւելի բազմաթիւ ըլլալով Գահիրէի մէջ, կը պահանջէին որ եթէ ոչ անգլիե-րէն, գոնէ իտալերէն ներկայացումներ տրուին Խտի-վականին մէջ:

Աղեքսանդրիայիները Գահիրէցիներուն միացած

և շնորհիւ անգլիական Փրանսատեայ քաղաքակա-նութեան՝ յաղթութիւնը իրենց կողմը մնաց և Հա-րաթ գիշեր ձիանջի ինտրէնտութեան տակ գըտ-նուող խտալական գուսաներգական խտարը իր ձե-ստէ՝ բրաւ Վէրտի Օրէրայով:

Թատրոնին մէջ այն սգեւորութիւնը կը տիրէր որուն նմանը տեղի պիտի ունենար եթէ Մէնէլիք Քիլիմալէն ներս մտնէր չղթայակապ:

Արահին մէջ նստելու տեղ չկար:

Աղեքսանդրիայի լաւագոյն դասը մեծ տեղ կը գրաւէր ատոնց մէջ:

Բարձր. Խտիվը երկու արարուած տեսնելէն վերջ մեկնեցաւ:

Օր. Մանտիօրօզ (Տէղտմոնա) ամբողջ սրահը իրեն գրաւեց իր հիանալի ձայնով, թէեւ ամբողջ սրահին ծափահարութիւնները իրեն կուղղուէին՝ լայց խտալացիները և իտալացիները ծափ դարձած տեսե-նին իրենց անանկ մը կուգար որ Օրէրանի իշխանը կապտակեն, և բնականաբար սգեւորութիւնը վայր-կեան մը իսկ չի թուլացաւ:

Աթէն-Քէ կը հեռագրեն թէ խորհրդարանը 58ի գէմ 77 քուէով մերժեց է՝ պատերազմի դէպքե-րուն վրայ քննիչ յանձնաժողովի մը անուանման ա-ռաջարկին յետաձգումը: Կառավարութիւնը յետա-ձգման կողմ էր:

ՌՈՒՍԻՈՅ զիտողութիւններուն վրայ, կը հեռագրէ Ռիւդէր, օսմ. նաւատորմին վերականգնութեան գործը յետաձգուեցաւ: Ռուսիա ծանուցադրու մը տուած էր Դրան, պահանջելով ուղեւորութեան պատերազմական տուգանքի հաշուէն մէկ միլիոն ոսկիի գումարին վճա-րումը:

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՔ «ՓԱՐՈՍ»Ի

Ս. Օ. Քեմա, (Վերին Եղիպտոս). — Ստացանք ձեր հեռագիրը և ձեր յանձնարարութեան համեմատ կը խրինք մէկ օրինակ ֆուտա ի Մէրափի: Իսկ միւս երկու օրինակին համար՝ կապանք ձեր նամակին: Շնորհակալութիւն ձեր համակիր զգացումներուն հա-մար:

Լ. Բ. Բարիզ. — Արդեաք ձեռքերնիդ չի հասաւ մեր նամակը:

ՏԻԿԻՆ Ա. ի . . . — Կրնոք տալո՞ւ ըլլալ մեր գաղտնաբացութեան վրայ. արդէն այդ գայ-թակղական դէպքը մեզ պատմուած տոնէ՝ ձեր ա-նունը չէր արուած:

37,000 ՅՐԱՆՔ . . . ԱՆՏԷՐ

Լէօն Կօզլանի նորավէպերէն մէկուն մէջ անդլիացիի տիպար մը կայ որ յատկա-պէս Բաշիզ եկած է անհեթեթ և սոսկալի դէպքերու զոհ երթալու փափագով: Որքան որ Ալպիօնի այդ տարօրինակ ուղիին ամեն մի-ջոցներու գիմած է՝ չարագործի մը ձեռքով սպաննուելու և կամ՝ դոնէ գոնէ կողոպտուելու համար, տակայն հակառակ իր բարիկամեցողու-թեան, մէկ մազին անգամ դպչող չէ եղած:

Վերջապէս տեսնելով որ հնար չի կայ նպա-տակին համարելու և ուղեւորը որ անպատճառ բան մը գողցուի իրմէ, բայց պահարանի մը մէջ տառ-տառնը՝ հոտ պանքտոմա դնե-լով նամակատան տուփին մէջ կը ձգէ, Պ. Ֆից Ժէրայի հոսցէին:

Անշուշտ քանի հարիւր Ֆից-Ժէրայներ կը գտնուին Բարիզի մէջ, կը մտածէր անգ-լիացին՝ Հետեւաբար անկարելի է որ այդ պահարանը ինձ վերադառնայ և նոյն իսկ եթէ ձեռքս հասնի՝ գոնէ մէջի պանքտոմոնե-րէն թեթեւցած պիտի ըլլայ:

Բայց խիստ զարմացաւ երբ քառասունը ութ ժամ ետք նոյն պահարանը իրեն կը յանձնուէր իր ամբողջ պարունակածով: Կող-լան՝ մոռցած է աւելցնել թէ թղթատարա-

կան վարչութիւնը դատ բացաւ այդ անդիւ-
ցիին դէմ որ արժէքաւոր պահարան մը տու-
վը կը ձգէր առանց պարունակութիւնը յայ-
տարարելու նամակատան պաշտօնէութեան :

Ինչ որ նորավէպի մը մէջ երեւակայօրէն
զրած է Կողան , այս օրերս իրականութեան
մէջ կը հանդիպի նոյն իսկ ի Բարիդ :

Անցեալ չարթու նամակատան տուփերուն
մէջուն մէջ երկու բաց նամակներ գտնուե-
ցան որոնց հասցէն էր «Ա. Պարոն Հարցա-
բընիչ Դատարար» :

Այդ կրկին պահարաններուն մէջ զըտ-
նուեցան 37,000 ֆրանքնոց պանքտոմներ, ա-
ռանց տող մը գրութեան :

Թղթատան տնօրէնը այդ խորհրդաւոր
ու արժէքաւոր նամակները յանձնած է Հան-
րապետութեան գատախաղին :

ՇՈՒՄՈՒՄ

ՀԱՄԱՐՈՅՐ ԵՒ ՍԷՐ

Ամենը սիրոյ ստեղծագործութիւնը հաւ-
րոյն է :

Համբոյրը գեղեցիկն է՝ ոչ թէ կնոջ :

Ինչ որ գեղեցիկ է հաւ ու բոյր ունի,
ինչ որ հաւ ու բոյր ունի գեղեցիկ է. ինչ
որ գեղեցիկ է համբոյրէ :

Աշխարհի մէջ չկայ բան մը աւելի ա-
նուշ քան համբոյրը, մանաւանդ առաջին
համբոյրը :

Անկեղծ համբոյրը հոգիին ծաղիկն է
որուն բոյրը բարիները միայն կանեն :

Շատեր կը համբուրեն, բայց քիչեր
միայն կզգան :

Խօսքը սրտին սնունդն է, բայց համբոյ-
րը հոգիին :

Համբոյրը սիրոյ բանալին է եւ սերը
համբոյրին :

Ամենէն անուշ համբոյրը անոնք գիտեն
սալ որոնք հոգիով միայն կը սիրեն :

Կը զարմանաւ թէ ի՞նչպէս կարիւր
անոնք որոնք համբուրել չեն գիտեր. արդեօք
ցաւերու գերեզման եղող համբոյրը անոնց
օրրանն ալ է որուն երբեք պէտք չեն ունե-
ւար անզգաները :

Զսիրող երիտասարդութիւնը ժանգոսի :

Սերը զգացումներու ազնուացման կը-
նամ ըսելը թէ միակ միջոցն է. ով որ չսի-
րէր չար է եւ ժանգոսած :

Ամենէն մեծ վիշտը սիրոյ մէջն է եւ
ամենէն մեծ երջանկոտիւնը՝ մեծ վշտին.
Կ'ուզե՞ս երջանկոտիւնը ճանչնալ, սիրէ՛ եւ
սառապէ :

ԱՐՄԱ

Le Gérant: Dr. A. S. HAGOPIAN
Տպագրութիւն ՓԱՐՈՍ լրագրի



ՃԵՐՄԱԿԵՂԵՆ ԵՒԱՅԼԵՆ ԼՈՒԱԼՈՒ ՀԱՄԱՐ
Գ Ռ Ր Ծ Ա Ծ Ե Յ Բ

ԼԷՍԱՒԻՍԻԻ ԺԵՆԵՐ

Ծախքի եւ ժամանակի խնայողու-
թիւն. — Մաքրութեան կատարելագոր-
ծութիւն. — Արագութիւն եւ դիւրութիւն. — ձեռնակե-
ղեցներու եւ այլոց հսկանքիւն :

ԿՍՐԵԻՌՐ. Լէսաւի սիւ ժեներն 21 ՄԱՇԵՅՆԵՐ

Եւրոպիոյ եւ Ամերիկայի մէջ 100,000,000 ֆրո
ստեղծուած սպառում. — Դորձածութեան կերպը խիստ
դիւրին՝ իւրաքանչիւր բաժնի վրայ կը գտնուի :

Միակ ներկայացուցիչ յեգիպոս

Կ. Վ. ԵԿԱՒԵԱՆ ԵՒ ԸԿ

Դահլիշ. ՊԱՋԱՐ ՄՈՒՐՈՒՐ 13—24

ԺԱՄԱՅՈՅՐՈՅԻ ՊԵՏԲ ՈՒՆԻՔ



Դիմեցէք ՍԵՒՎԱՍ

ՃԵՒՆԻ նորահաւ

առաւ միջերանոցն ի

համ հալիլ փողոց

(Ոսկերչաց շուկան)

ձեւաձիւր վեճակի

մէջ : Սեւլանեան վա-

ճառատունն որ Պոլ-

սոյ հրապարակի վրայ

մեծ համբաւ մը կը

վայելէր արդէն, իւր

ապրանաց ընտրութեամբ ու զնոյ անմրցելի ածա-
նութեամբ, վերջերս բոլորովին հոս փոխադրուած

Ըլլալով Եգիպտոսի Հասարակութիւնն եւս պիտի կըր-
նայ մեծապէս օգտիլ այս առիթէն :

Աւելորդ չենք համարիր փոքրիկ դաշտաւոր մը

ասլ մի բանի տեսակ ժամացոյցներու գնոց վրայ :

Նիւէյ մէկ կողմն ապակի, կորէն լարուղ 22 դե.ողջ

» » » » » » ուրիշ մէկ

Նիւէյ, մէկ կողմն ապակի կորէն լարուղ ոսկե-

Նիւէյ, երկու կողմն ապակի, կորէն լարուղ 40 » »

» » » » » » ոսկեպաս

Աւծար » » » » » » 50 դե.ողջ

» » » » » » 70 » »

» » » » » » ոսկեպաս

» մէկ » » » » » » 80 դե.ողջ

» » » » » » ոսկեպաս

Ոսկի, երկու կողմն » » » » » » 85 դե.ողջ

» » » » » » 120 » »

» » » » » » սարքեր մէկ

» » » » » » սեւակ 150 դե.ողջ

Ճիւղ հաւորածոյ ամեն տեսակ ոսկի ժամացոյց-
ներու թէ կնոջ եւ թէ արանց համար անմրցելի գնեցով :
Առնելով դատ կը գտնուի նաեւ ամեն ճաշակի եւ
ամեն քառիկ յարմար արծաթ եւ նիւթէ ժամացոյցք,
շղթայք, եւ զոհարեղէնք. ինչպէս նաեւ պատի եւ
քոնտուլի բազմազան բանտիւններ :

Ուրիշիկեան ժամացոյցք նիւթէ քոնտուլի եւ գրա-
սեղանի յարմար :

Միւսիւն 10 դուրուս ողջ

որուն կանոնաւոր բանիւն երաշխաւորեալ է :

Ուրիշիկեան ժամացոյցք ուղղակի Սեւլանեան միջերա-

նոցն ի համ հալիլ փողոց (Ոսկերչաց շուկան) ձե-

վաճիր վեճակի մէջ :

Եգիպտոսի ամեն կողմէ եղած յանձնարարու-

թիւնը փութով կը կատարուին : 9—12

ԵԳԻՊՏԱԿԱՆ ԵՐԿԱՐՈՒՂԻՔ

ԺԱՄԱՅՈՅՐՈՅԻ ԵՐԹԵՒԵՆՈՒԹԵԱՆՑ

Սկսեալ 1 Փետրուար 1897

ԳԱՀԻՐԵՆ ԱՂԵՐՍԱՆԳԻՐՈՅ ԳԻԾ

Կ Ա Յ Ա Ր Ա Ն Ք	Դառն	Դառն	Կէս ուղ	Դառն	Կէս ուղ	Դառն	Կէս ուղ	Դառն	Կէս ուղ
	1,2,3,4,5	1,2,3,4,5	1,2,3,4,5	1,2,3,4,5	1,2,3,4,5	1,2,3,4,5	1,2,3,4,5	1,2,3,4,5	1,2,3,4,5
Գահիրէ	մեկ.	4 45	—	7 30	8 15	9 30	3 30	4 45	7 15
Պէնհա	»	8 —	—	7 49	9 32	10 15	4 47	5 29	8 32
Թանիս	»	11 28	—	8 30	10 30	10 55	5 45	6 7	9 30
Սահահ	»	11 48	6 —	8 34	11 15	11 —	6 26	6 11	—
Տամանիս	»	3 10	7 34	9 41	12 49	11 58	7 59	7 7	—
Ալեքսանդրիա	»	6 25	9 15	10 45	2 30	1 —	9 40	8 7	—

ԱՂԵՐՍԱՆԳԻՐՈՅԻ ԳԱՀԻՐԵՆ ԳԻԾ

Կ Ա Յ Ա Ր Ա Ն Ք	Դառն	Կէս ուղ	Դառն	Կէս ուղ	Դառն	Կէս ուղ	Դառն	Կէս ուղ	Դառն	Կէս ուղ
	1,2,3,4,5	1,2,3,4,5	1,2,3,4,5	1,2,3,4,5	1,2,3,4,5	1,2,3,4,5	1,2,3,4,5	1,2,3,4,5	1,2,3,4,5	1,2,3,4,5
Ալեքսանդրիա	մեկ.	—	7 —	7 15	9 —	9 20	2 30	4 15	6 15	11 —
Տամանիս	»	—	8 6	8 58	10 2	12 14	4 13	5 15	8 6	1 9
Թանիս	»	—	9 12	10 28	11 —	2 39	5 43	6 10	9 40	2 56
Պէնհա	»	6 15	9 16	11 20	11 5	2 49	6 30	6 14	—	3 6
Գահիրէ	»	7 18	9 59	12 23	11 46	4 43	7 33	6 52	—	4 25
Գահիրէ	»	8 30	10 45	1 35	12 30	6 25	8 45	7 35	—	5 50

ԳԱՀԻՐԵՆ-ՍԻԻԷԶ

ՊԵՆՀԱՅԻ ԶԱՄԲԱՅ

ՍԻԻԷԶ-ԳԱՀԻՐԵ

ԿԱՅԱՐԱՆՔ		ԱՌԱՐՈՅ	ԵՐԵԿՈՅ	ԿԱՅԱՐԱՆՔ		ԱՌԱՐՈՅ	ԵՐԵԿՈՅ
Գահիրէ	մեկ.	11 40	7 —	Սիւէզ (բարափ)	մեկ.	9 50	—
Պէնհա	ժամ.	12 28	7 48	» կայարան	»	—	3 30
	մեկ.	12 33	7 53		երեկոյ	1 20	
Զակաղիկ	ժամ.	1 34	8 54	Իսմաիլիա	»	1 20	7 5
	մեկ.	1 44	9 4				
Իսմաիլիա	ժամ.	3 40	առտ.	Զակաղիկ	ժամ.	3 7	8 53
	մեկ.	3 40	1 —		մեկ.	3 17	
Սիւէզ կայարան	ժամ.	—	5 —	Պէնհա	ժամ.	4 13	9 47
					մեկ.	4 17	
Տօք (բարափ)	ժամ.	6 55	—	Գահիրէ	ժամ.	5 5	10 35